



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ՝           Ձևավորող գնահատման գործիքների կիրառումը  
                          ինֆորմատիկայի դասաժամերին**

**ԱՌԱՐԿԱ                    Ինֆորմատիկա**

**ՅԵՂԻՆԱԿ                    Նաիրա Սերվենտիկի Եփրեմյան**

**ՄԱՐԶ                        Սյունիք**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

**Շաղաթի միջնակարգ դպրոց**

# Բովանդակություն

Ներածություն —————	2
Գրական ակնարկ —————	3
Տեսական մաս —————	4
Փորձնական դասի պլան 1 —————	10
Փորձնական դասի պլան 2 —————	11
Եզակացություն և առաջարկություն —————	12
Օգտագործված գրականության ցանկ —————	14

# Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է: ՁՈՐՋ ՎԱՇԻՆԳՏՈՆ

## ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարում բացատրական գննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը, որի հիմքում ընկած է ձևավորող գնահատումը:

**Ձևավորող գնահատումը** ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: **Ջետադարձ կապը** ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին: Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:

# Գրական ակնարկ

Ինֆորմատիկան ուսումնասիրում է ինֆորմացիայի և հաշվարկման տեսական հիմունքները, և քոմպյուտերային համակարգերում նրանց իրականացման և գործածման կիրառական միջոցները: Ինֆորմատիկայի տիրույթի մեջ են մտնում ինչպես տեսական , այնպես էլ կիրառական գիտական ճյուղեր:

Ինֆորմատիկան ընդարձակ գիտություն է, հետևապես չի սահմանափակվում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ուսումնասիրմամբ: Նիդերլանդացի գիտնական Էդսգեր Դեիկստրան ասել է՝ «Ինֆորմատիկան այնքանով է գիտություն համակարգիչների մասին, որքանով աստղագիտությունը՝ հեռադիտակի»: Հասարակության մեջ, ինչպես նաև դպրոցներում, շփոթում են ինֆորմատիկան բազմաթիվ պատրաստական դասընթացների հետ:

«Ինֆորմատիկա» անունն առաջին անգամ օգտագործել է գերմանացի գիտնական Կարլ Շտեինբուբը 1957 թվականին:

Մինչև 1920-ականները, համակարգիչ անվանում էին մարդկանց, հիմնականում՝ կանանց, որոնք սովորաբար աշխատում էին ֆիզիկոսի ղեկավարության տակ և կատարում էին մաթեմատիկական հաշվարկներ: Նրանց կատարած հաշվարկումներն առանձնահատուկ գյուտարարություն կամ ներըմբռնում չէր պահանջում, հետևաբար, 1920-ականներին ստեղծվեցին առաջին հաշվիչ մեքենաները:

Այս մեքենաների մի մասը, որն աշխատում էր շարունակական արժեքների հետ, հայտնի դարձավ որպես անալոգային հաշվիչ մեքենա: Ի տարբերություն անալոգային սարքերի, թվային մեքենան լոգիկական սարք է և սահմանափակված չէ վերոհիշյալ ֆիզիկական երևույթների հատկություններով, հետևաբար կարող է կատարել ամեն տեսակի «գուտ մեխանիկական» աշխատանք: Առաջին այսպիսի լոգիկական մեքենա ստեղծել է ինֆորմատիկայի հայր՝ Ալան Թյուրինգը, որին այսօր անվանում են Թյուրինգի մեքենա: Ժամանակակից համակարգիչը, որը մինչև ավելի արագ հիշողության սարքերի հնարումը օգտագործում էր տարբերության շարժիչներ, պատկանում է հաշվիչ մեքենաների թվային դասին, հետևաբար կատարելագործված տարբերակ է/1/:

## 1. Գրական ակնարկ

## Տեսական մաս

**Կրթական գնահատումը**<sup>[1]</sup>, գիտելիքների վերաբերյալ փորձնական տվյալների փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է: Գնահատման տվյալները կարող են ստացվել սովորողների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից՝ ուսումնառության արդյունքների ձեռքբերումը գնահատելու համար կամ կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ: Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստերով: Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող համայնքի (դասարան, սեմինար կամ սովորողների այլ կազմակերպված խումբ), դասընթացի, ակադեմիական ծրագրի, հաստատության կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վրա:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: «Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը: Գնահատման հիմնական նպատակն է.

- սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը,
- արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը,
- գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Չանրակրթական դպրոցներում գոյություն ունեն գնահատման երկու հիմնական տեսակներ՝ **ամփոփիչ** և **ձևավորող** գնահատում: Ամփոփիչ գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմության գնահատումը ժամանակի որոշակի հատվածում և գրանցելու ու հրապարակելու առաջադիմության առկա մակարդակը: Ձևավորող գնահատման նպատակն է ստուգել աշակերտի՝ գիտելիքի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը,
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը,
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը,
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը,
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը,
7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը,
8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,
10. դպրոցի հանդեպ ծնողների վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հոսսալիություն
- անկողմնակալություն

- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն

## **ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՅԱՏՈՒՄ**

Գոյություն ունեն գնահատման 2 փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) եւ միավորային:

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների եւ սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի եւ սովորողների առջեւ դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետեւողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

## **ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ**

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված եւ պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում եւ շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

- ուսուցման նպատակների եւ արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, Էկրանին եւ այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց եւ ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման եւ արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

## **1.Վիքիպեդիա հանրագիտարան**



## **Բանավոր հարցման գնահատման ռուբրիկ**

Միավորային եւ ձևավորող (ուսուցանող) գնահատման տեսակներից մեկը բանավոր հարցումն է, որն իրականացվում է բոլոր դասարաններում և բոլոր առարկաներից: Անվանումն արդեն հուշում է, որ ստուգման ժամանակ կարևոր դեր է հատկացվում բանավոր խոսքին, հետևաբար գնահատելիս ևս պետք է հաշվի առնել բանավոր խոսքին առնչվող որոշակի չափանիշներ: Բանավոր հարցման միջոցով ստուգվում են ինչպես սովորողի մտապահման ու վերարտադրման, այնպես էլ նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Սույն ռուբրիկը նախատեսված է բանավոր հարցման ձևավորող (ուսուցանող) գնահատման համար, որի արդյունքում միավորային գնահատում չի ենթադրվում, որը կազմել ենք աշակերտների հետ միասին և մշակել գնահատման չափանիշներ /շատ վատ, վատ, անբավարար, բավարար, միջին, միջինից բարձր, լավ, շատ լավ, գերազանց, բացառիկ/:

Առանձնացված է բանավոր խոսքին ներկայացվող 3 հիմնական պահանջների՝ **բովանդակությանը, կառուցվածքին եւ արտահայտման** (ներկայացման) ձևին: Սովորողի բանավոր պատասխանին զուգահեռ հնարավոր է ընտրել, թե ո՞ր չափանիշը սովորողը ինչ մակարդակով է ապահովում: Դիտարկումների եւ կատարած նշումների հիման վրա պլանավորվում է արդյունքների բարելավմանն ուղղված հետագա աշխատանքը: /1/

<b>Խոսքի բովանդակությունը</b>	<b>Խոսքը չի համապատասխանում թեմային, արտահայտած մտքերն անհասկանալի են:</b>	<b>Խոսքը կառուցված է թեմայի շուրջ, մտքերը համակարգված չեն, բառապաշարը մասամբ է համապատասխանում</b>	<b>Խոսքը համապատասխանում է թեմային, ձևակերպում է ինքնուրույն մտքեր, կիրառում է համապատասխան</b>	<b>Խոսքը համապատասխանում է թեմային, պարունակում է պատճառահետևանքային կապեր և լրացուցիչ տեղեկատվություն</b>	<b>Խոսքը համապատասխանում է թեմային, կառուցված է վերլուծութայինների և պարզաբանող օրինակների վրա:</b>
-------------------------------	--	--	---	--	---

		<b>Թեմային:</b>	<b>բառապաշար:</b>		
<b>Խոսքի կառուցվածքը</b>	<b>Մտքերը կապակցված չեն, թռչում է մտքից միտք</b>	<b>Ասելիքը ներկայացնում է հատվածաբար, առկա են լեզվական սխալներ:</b>	<b>Խոսքն ամբողջական է, գրքային ձևակերպումներով, չկան լեզվական սխալներ:</b>	<b>Խոսքը գրագետ է, մտքերը ձևակերպում է ինքնուրույն, հակիրճ կան ընդարձակ:</b>	<b>Խոսքը կուռ է, տրամաբանված, գրագետ, ներկայացնում է պահանջված տարբերակով (ընդարձակ, համառոտ՝ հարազատ մնալով տեքստին):</b>
<b>Արտահայտման ձևը</b>	<b>Մտքերն արտահայտում է անվստահ, երկմտելով:</b>	<b>Խոսքը ձգձգված է, կրկնություններով, առկա են անհարկի դադարներ :</b>	<b>Խոսքը սահուն է, առկա են տրամաբանական դադարներ :</b>	<b>Մտքերն հաղորդում է կազմակերպված և արտահայտիչ:</b>	<b>Մտքերն արտահայտում է վստահ, համոզիչ՝ ներկայացնելով սեփական տեսակետը, ապահովելով կապը լսարանի հետ:</b>

**1. Բանավոր հարցման գնահատում**

# Փորձնական դասի պլան 1

Առարկան - Ինֆորմատիկա

Դասարան - X

Դասի տևողությունը - 45ր

Դասի թեման - Վիրուս և հակավիրուս

Դասի տիպը - կոմբինացված


Ուսուցման մեթոդները - թեստ, հարցադրման, ձեռքսեղմման, դասախոսություն

Կահավորումը - համակարգիչ/համացանց/, գիրք, պաստառներ, մարկեր

Դասի նպատակը - Համակարգչային վիրուսների, դրանց տեսակների, հակավիրուսային ծրագրերի, դրանց տեղակայման, անհրաժեշտության մասին իմացություն և կարևորում:

Դասի ընթացքը՝ 1. Կազմակերպչական մաս - 2ր

2. Հարցուպատասխանի միջոցով անդրադարձ նախորդ դասին - 5ր

3. **Հայտորոշիչ թեստ** - 5ր  հայտորոշիչ թեստ

4. Նոր նյութի հաղորդում - 10ր

5. <<**Ձեռքսեղմման մեթոդ**>>-ի կիրառում, որի նպատակն է՝ նշված

ժամանակահատվածում ով ավելի շատ ձեռքսեղմում կանի /ֆիզկուլտդար/, որը կապված է նաև դասի թեմայի հետ՝ կենդանի օրգանիզմի և համակարգչային վիրուսների միջև զուգահեռներ անցկացնել բանավոր խոսքի միջոցով:- 3ր

6. **«Չորս անկյուններ»** հնարի իրագործում, որտեղ երեխաները

կպարզաբանեն իրենց ընտրած պատասխանը՝ առաջադրված հարցերի շրջանակներում:

Քննարկումից հետո, եթե հարկ է համարում, կատարում է պատասխանի ընտրության փոփոխություն՝ փոխելով ընտրած անկյունը /տեղը/: - 5ր

7. **«Գիտելիքների բուրգ»**/խմբային աշխատանք/ -Նոր նյութի համատեղ

ուսումնասիրությունից հետո աշակերտներին առաջարկվում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ կարող են անել դասի տվյալ փուլում: Այդ նպատակով յուրաքանչյուր խումբ թղթի վրա պատկերում է բուրգ՝ ուսուցչի տված օրինակով, բուրգի ամեն մի հատվածում գրում է նախադասություններ, որոնց միջոցով արտահայտում է տվյալ թեմային վերաբերող իր գիտելիքները:Վերջում անդրադառնում են գրված մտքերին, խմբավորում և ամփոփում:5ր

8. **Վերջնաթեստ**:- 5ր

9. Ամփոփում, ինքնազննատում և փոխադարձ գնահատում, տնային առաջադրանքի հանձնարարում /§1.2, առ. 1-6, էջ 6-11/ : - 5ր



## Փորձնական դասի պլան 2

Առարկան - Ինֆորմատիկա

Դասարան - VII

Դասի տևողությունը - 45ր

Դասի թեման - Տեքստի ձևաչափի սահմանում

Դասի տիպը - համակցված

Ուսուցման մեթոդները - ցուցադրման, հարցադրման, խոսքի, մուտքի

Կահավորումը - համակարգիչ, դասագիրք, հարցաթերթեր, տետր, գրիչ


Դասի նպատակը - 1. Աշակերտները կհմանան, թե ինչպես սահմանել պարբերության

ձևաչափերը՝ աչքի ձևի սահմաններ, I տողի սկիզբ, նախորդ և հաջորդ տողերի

հեռավորություն: 2. Կհմանան լուսանցքների, թղթի արտածման ձևի, թղթի բարձրության և

լայնության սահմանման մասին, կամրապնդեն ստացած գիտելիքները:

Դասի ընթացքը՝ 1. Կազմակերպչական մաս - 2ր

2. Որպեսզի է հասկանալի լինի, թե ինչ են յուրացրել աշակերտները նախորդ դասից, կիրառվի մուտքի քարտեր:  Մուտքի քարտ - 5ր


3. Ֆրոնտալ մեթոդով անդրադարձ նախորդ դասին: - 5ր

4. Նոր նյութի հաղորդում ցուցադրման միջոցով: - 10ր

5. Նոր նյութի ամրապնդման համար աշակերտները կկատարեն լաբորատոր աշխատանք 1-ը: - 16ր

6. «Հարցադարան» մեթոդի միջոցով աշակերտները խմբային աշխատանք կկատարեն՝ նյութի յուրացման աստիճանը գնահատելու և դասի ամփոփման համար: [Հարցադարան](#) - 5ր

7. Տնային առաջադրանքի հանձնարարում՝ §1.2, առ. 1-3, էջ 6-10: - 2ր



## **Եզակացություն և առաջարկություն**

Ինֆորմատիկայի դասաժամերին կիրառել են ձևավորող գնահատման հնարներ և մեթոդներ, որոնք ինձ օգնել են ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իմ և սովորողների քայլերը: Իմ քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնել են բարելավել սովորողների ձեռքբերումները:

Դասի յուրաքանչյուր փուլում, ժամանակ առ ժամանակ, հարցերի, դիտարկումների միջոցով ստուգել են, թե արդյո՞ք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:

Այդ նպատակով կիրառել են մի քանի հնարներ, որոնք օգնել են սովորողներին՝ ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները բացահայտելու, անհրաժեշտ ճշգրտումներ անելու, առաջադրանքները հնարավորինս հասկանալի դարձնելու և անսխալ կատարելու համար: Այս հնարներն օգնեցին նաև սովորողների ինքնուրույն աշխատանքը խթանելու, ինչպես նաև կազմակերպելու ինքնագնահատում և փոխադարձ գնահատում: Կիրառելով ձևավորող գնահատում, համոզվեցի, որ նորարարության գործընթացում դասավանդումն էապես պետք է փոխվի:

<<Վիրուս և հակավիրուս>> թեմայի ուսուցանման ժամանակ հաստատեցի նաև միջառարկայական կապ՝ ինֆորմատիկա-կենսաբանություն՝ կենդանի օրգանիզմի և համակարգչային վիրուսների վերաբերյալ՝ <<Ձեռքսեղման մեթոդ>>-ի միջոցով:

Ի վերջո՝ դասընթաց նոր սկզբունքներով՝ նշանակում է՝

- անկախություն
- համագործակցություն
- փոխազդեցություն (ինտերակտիվություն)
- ստեղծականություն:

Իմ փորձնական դաս-ալլաններով իրականացված դասերի արդյունքում ես և աշակերտներս եկանք այն եզրակացության, որ ձևավորող գնահատումը և՛ ուսուցանող է, և՛ հետաքրքիր, և՛ արդյունավետ, և՛ անաչառ: Կարևոր էր նաև այն, որ աշակերտները կատարեցին ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. [Գրական ակնարկ](#)
2. [Վիքիպեդիա հանրագիտարան](#)
3. [Բանավոր հարցման գնահատում](#)
4. <https://kznakgnahatum.blogspot.com/p/9.html>